




## Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԱՐԱՐԱՏԻՆ ԵՎ Ս. ԷԶՄԻԱՇՆԻՆ ՇՈՒՆԶԸ



իրելի Հայրապետին դարձաւ լուրը փայտի մը նման բաց-  
փեցաւ մեր միօրինակ առօրյա-  
յին վրա և սպասումի հերով  
ալիւի արագ ու խանդավառ  
դարձուց զայն և շարափ մը ամբողջ արձա-  
գանքեց.

— Հայրապետը եկաւ Երեւան, Հայրա-  
պետը եկաւ Մասկվային, Հայրապետը փա-  
րիզ հասաւ, Հայրապետը այս իրիկուն  
կհասնի, ուշացաւ...

Ու բացփեցաւ կիրակի առաւօտը, մեր  
տարահալած ժողովուրդը եկաւ հեռավոր  
քաղաքներէն ու գյուղերէն, ապարանքներէն  
ու հյուղականներէն, և ողողեց Քեյրուքի  
մայրերն ու ճամբաները՝ խաղիկ օդանա-  
վակայանէն մինչև Բուրջ-Համուդ, և Բուրջ-  
Համուդէն մինչև արևակեղ ու նեղ արահա-  
տները Անթիլիասի. ան բազմացաւ, հորդե-  
ցուց և ալեկոծեց փողոցներն ամեն՝ փոթո-  
րիկովը իր կարողին, ու բացաւ սիրտը՝  
բարիգալուստ մաղթող հյուրընկալ պա-  
տաններուն նման:

Պատուհաններ, տոններ ու տանիքներ բն-  
ջեցան կարտոտի բարխտոյ սիրտերով և բա-  
զարը ալեկոծող բազմութիւնը դարձաւ կա-  
րտոտի ծով մը հսկա. շատեր պատշգամբներէն  
գորգեր երկարեցին հյուրընկալութեան իրրե  
նշան, գորգ շունեցող ծերունիներ իրենց  
մարմինին նման ճմռթկաւ և իրենց հոգիին  
պես բարխտոյ թաշկինակները շարժեցին ու  
թաշկինակ շունեցողներն ալ՝ կարտոտի ալիւ-  
փոյ ծով իրենց սիրտերը բացին...

Մեր ժողովուրդը պահ մը մոռցաւ զինք  
կրծող առօրյայի բներն ու ցափերը, սրբի-  
ցաւ ու արիացաւ, միացաւ ու ամբացաւ  
ինչպես միացած ու ամբացած էր Վարդա-  
նանց պատերազմին և ինչպես միացած ու  
արիացած էր Սարգսապատի կռիւին,

որովհետեւ եկող Հայրապետը խորհրդանշէ  
էր հայ ժողովուրդի ու Հայ եկեղեցւոյ միաս-  
նակամբութեան, որովհետեւ ան շունչն էր մեր  
Հայրենիքին, ու ոչին՝ մեր եկեղեցիին:

Եվ վերջապես հասաւ Հայրապետը՝ շար-  
ժնով մարգերու և ինքնաշարժերու հորձան-  
քը խաղիկ օդանավակայանէն...

Եկաւ ան և Էջմիածնի դարավոր գմբէթ-  
ներէն խունկ ու աղոթք բերաւ մեզի:

Եկաւ ան և Սեանի կապույտ ջուրերէն  
երազ ու կարտո բերաւ մեզի:

Եկաւ ան և Օշականէն և Մեսրոպի հան-  
ճարէն լույս ու ճաճանք բերաւ մեզի:

Եկաւ ան և Արարատէն ողջունք բերաւ  
մեզի:

Եկաւ ան և Հայրենիքի մեր եղբայրներուն  
կարտոտի հերք բերաւ մեզի...

Եվ ինչպիսի հայրենակարտ ու հողմա-  
ցրիվ մեր ժողովուրդը չմիանար ու թաց  
աչքերով իր գիրկը չընդունէր իր Հայրա-  
պետը:

Ինչպիսի ան շվարակեր լիրանայի առ-  
պընչական ժողովուրդը այն կարտոտով ու  
տենդով, որ կհորդեր իր արշուին ու երակ-  
ներուն մեջ, ու զայն դարձացնելով ըմել  
շտար՝ փծա մեկեւ կռմն...

Ինչպիսի ան չթողէր եկեղեցւոյ միաս-  
նակամբութեան մասին ունեցած իր հավատքը  
առօրյա թշնամանքներու փոշիէն:

Ինչպիսի շվառեր իր սիրտը Հայրապետին  
բերած հուշտով...

Եղան այս բոլորը, որովհետեւ մեր ժողո-  
վուրդը կհավատա մեր դարավոր եկեղեցիին  
միասնակամբութեան, որովհետեւ մեր ժողո-  
վուրդը իր բաղկերակին գաղթին պես կզգա  
իր հայրենական վերակառուցումին տենդը,  
և այս դարմանալիտրէն հիշտ է մեր նոր սե-



րունդին, ուսեալ թի անուա երիտասարդութեան, որ հասակ առած է օտար մայրերու վրա, որ շուք չեն ձգած ծառերն Արուսեանի, որ դիտութիւն ամբարած է ուսումնարաններէն, որոնց առջեւ չեն կանգնած դարերու խմաստութիւնը մարմնավորող նորենացիին ու Շիրակացիին արձանները, որ հաճախած է սինեմաները, ուր չի լսվիր սրտառու կարկաչը «Անտաշ» օպերաներուն և որուն մեկ մասը, վերջապես, ծաղիկի նման բացված է հյուսիսայիններու տիղմին մեջ... Ամեննեւ նուազումը հայութենէ զարմանալիորեն չպարզված հայ երիտասարդութիւնն է, որ գույնզգույն նախշերով գորգի մը նման կտարածվի իր սիրելի Հայրապետին ճամբուն վրա: Այս եռանդը, այս թոհուբոհը, փոթորկող այս հոգիները խորհիլ կուտան մեզ՝ այլասերող ազդեցութիւնները չեն կրնար եղծանել մեր հոգին, այնքան ատեն, որ Անթիլիասէն մինչև Էջմիածնի սուրբ կամարները երկարող ոսկի կամուրջ մը գոյութիւն տան, և մեր առօրեայ շի կրնար մեր ճամբան շեղել, այնքան ատեն, որ Արուսեանի պողոտային մինչև աշխարհի ամենամոտի անկյունը ծիածան մը կա ձգված:

Եվ ըսեք, ո՞վ ունի մեր Երկրուած ու կարոտախոտով հոգին, Նոր կխոնարհինք մեր սիրելի Հայրապետին առջև:

Ո՞վ ունի մեր բնդուն ու քերթի հոգին, երբ կհամբուրենք անոր Աջը և Աջին հետ կարծեք՝ հանճարեղ ձեռքերը նարեկացիներուն ու Շիրակացիներուն, Հովնաթաններուն և Էջմիածնի որմերը զարդարող անառն հայ վարպետներուն:

Ո՞վ ունի վեպերելու, կառուցանելու և ստեղծագործելու մեր տենդը՝ Նոր կնայինք մեր Հայրապետին աչքերուն և անոնցմէ բարձրացող հրճվանքին մեջ կտեսնենք տուֆապատ հասակը նրեանի շենքերուն, ալեխոտով ծովը գործարաններուն և զվարթ ճրվողը ծաղկող նոր մանուկներուն...

Եվ վերջապես ո՞վ ունի լույսը մեր աչքին՝ երբ գիւրքի մը պէս Հայրապետին մեջնէ կկարդանք դարավոր պատմութիւնը մեր ժողովուրդին ու մեր աչքին կպարզվին վերջին պայծառ էջերը անոր:

Մեր սերունդին համար չկա այլասերում, երբ զգանք թարմ շունչը Հայրենիքին:

Մեր հավատքին համար չկա խախտում, երբ տեսնենք ամբարցող կապը Մայր Աթոռին և Սփյուռքի մեր եկեղեցիներուն, որոնք դարերով պահեն են մեր բազմաշարժար ժողովուրդը դարերու ընթացքին ու հիմա հանձնելու քսաներորդ դարու լուսահորդ հորձանքին, ուր կբալենք մենք Հայրենիք ոմեցող բոլոր մարդոց նման առույգ ու հաստատակամ, մտոցած բառերն անգամ այն երգերուն, որոնք դարերով հոսեցան մեր ժողովուրդին սիրտին, Հայրենիքի արցունքին նման լեղի, և մեր եկեղեցիները այրող կրակներուն նման կիզեցին անոր հոգին:

Կբալենք հիմա և ապագային թափանցող մեր հայացքը կճառագայթի կյանք և ստեղծագործութիւն...:

ԷՏ. ԿՈՏԱԼԱԶՅԱՆ

(Բեյրութ, «ՁԱՐԹՈՒՔ» օրաթերթ, 16 փետրվարի 1956 թ.)

